



Ագդարարության Trumper's Sound փող

54-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՍԵՂՏԵՐԵՐ - ՀՈԿՏԵՐԵՐ 2023





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ ԵՐԿԱՄՅԱ ԹԵՐԹԸ ՍԻՂՆԵՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՐԱՏԱՐԱԿՈՒՅՈՒՆԸ Է: ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽԱՐԱԳԻՐ՝ ԻՈՎԻՎ ՀՐԱՀ ԳՈՒՅՈՒՆՃՅԱՆ:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուրախացողների հետ ուրախացե՛քՀովիվ՝ Հրաչ Գույունճյան

Սաղմոս 4.Դոն Սթոքմբ

Զգո՛ւյշ եղիր, որ հանկարծ քո Տեր Աստծուն չմոռանաս...Քաղված

Աստված մույնպես ատում է կրոնը.....Վեր. Հովսեփ Հովսեփյան

Քսան երկար տարիներից հետոՔաղված

Մեծ ճերմակ Գահի դատաստանը

և վերջին իրադարձությունները (2).....ՉՄԵԲ պանորամա

Կապույտ ուլունքներով վզնոցը.....Քաղված

Դեպի ԲեթելՔաղված

Լսել զանգակի ազդանշանըՔաղված

Փոփոխություններ ACM-ումԴոկտոր՝ Դանիել Զելմա

«Ուրախացողների հետ ուրախացե՛ք և լացողների հետ լացե՛ք»

Հռոմ. 12:15

Ի՞նչ է պատահել աշխարհին: Ականատես ենք այնպիսի բաների, որոնք նախկինում չէինք տեսել, չէինք լսել. «Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորություն՝ թագավորության դեմ. և սովեր ու համաճարակներ պիտի լինեն, և տարբեր տեղերում՝ երկրաշարժեր: Բայց այս բոլորը՝ ցավերի սկիզբն է: Այն ժամանակ ձեզ նեղության պիտի մատնեն ու պիտի սպանեն, և Իմ անվան համար բոլոր ազգերին ատելի պիտի լինեք»:

Աշխարհի հայացքն ուղղված է Մերձավոր Արևելքին: Ադրբեջանը շրջափակեց 120,000 արցախահայությանը, որոնք դարեր շարունակ ապրել են իրենց հայրենիքում՝ Լեռնային Ղարաբաղում: Էլեկտրականությունը և այլ մատակարարումներ 90 օր անհասանելի էին: Չկար ջեռուցում, սնունդ, վառելիք, աշխատանք, դեղորայք: Բոլորն ապրում էին անհայտության վախի մեջ: Իսկ հետո ռմբակոծությունները սարսափ տարածեցին ժողովրդի մեջ, և նրանք ստիպված լքեցին իրենց հայրենիքը: Ընդամենը մի քանի շաբաթ առաջ տարբեր տարիքի շուրջ 120,000 մարդ լքեց իր բնօրրանը: Նրանք թողեցին իրենց տները, խանութները, հողն ու անասունները՝ Հայաստան փախչելու համար: Գրեթե բոլորը Հայաստան ժամանեցին միայն իրենց վրա եղած հագուստով: 2,5 միլիոն բնակչություն ունեցող երկիրը, որի 30%-ը աղքատության շեմին է, ընդունեց 120,000 կարիքավոր փախստականներին:

Վերջին 25 տարիներին Հայ քրիստոնեական առաքելությունը հավատարմորեն ծառայել է Հայաստանի կարիքավոր ժողովրդին, սակայն մենք պատրաստ չէինք մնան աղետ դիմագրավելուն: Մարդիկ ամեն օր թակում են մեր դուռը, ցանկացած տեսակի օգնություն են խնդրում՝ սնունդ, հագուստ, վարձակալական աջակցություն, դպրոցական պայուսակներ, ձմեռային տաք հագուստ: Մարդիկ խորհրդրդատվության կարիք ունեն, քանի որ գրեթե յուրաքանչյուր ընտանիքում զոհեր կան:

Մենք լացում ենք լացողների հետ, բայց ավելի ծանր է Հայաստանի մեր աշխատակիցների համար: Երկու օրվա մեջ \$ 10,000 արժողությամբ սնունդ բաժանեցինք 240 մարդու: Խնդրում ենք աղոթքով աջակցել մեզ, քանի որ այս մարտահրավերը մեր կարողությունից ավելի ծանր է: Շուտով նոր հագուստով բեռնված ուղեբեռ կուղարկենք Հայաստան, քանի որ Հայաստանի կառավարությունը սահմանափակում է դրել օգտագործված ապրանքի վրա: Բեռնափոխադրման ծախսը կազմելու է \$18,000: Եթե կարող եք և ցանկություն ունեք օգնելու, ապա խնդրում ենք մեզ հետ կապ հաստատել այս հասցեով՝ info@acmaust.org:

Այնուամենայնիվ, այս բոլոր արցունքների միջից ուրախություն ենք վայելում՝ իմանալով, որ Նրա գալուստը մոտ է, և շուտով տեսնելու ենք Նրան մեր աչքերով և ծնկի եկած երկրպագելու ենք Նրան:

Թո՛ղ Տերը բոլորիդ ապահով պահի մեր Տեր Հիսուսի մեջ:

Հ. Գ.



«Ողորմություններդ թող ինձ վրա գան, ո՛վ Տեր,

փրկությունդ՝ Քո խոսքի համաձայն:

Ապա կպատասխանեմ ինձ նախատողին,

քանի որ Քո խոսքին եմ վստահում:

Ճշմարտության խոսքը երբեք մի՛ հեռացրու իմ բերանից,

քանի որ իմ հույսը Քո դատաստանների վրա է:

Քո օրենքը միշտ պահելու եմ, հավիտյանս հավիտենից:

Ազատությունամբ եմ քայլելու, քանի որ Քո օրենքները փնտրեցի:

Քո վկայությունները հայտնելու եմ թազավորների առջև

և չեմ ամաչելու: Ուրախանալու եմ Քո պատվիրաններով, որոնք սիրում եմ:

Ձեռքերս երկարելու եմ դեպի Քո հրամանները, որոնք սիրում եմ,

ու Քո կանոնների մասին եմ խորհրդածելու:»

Սաղ. 119:41-48

Սաղմոս 4

Չորքորդ սաղմոսը մի մարդու աղոթք է, որին մարդիկ ուզում էին կործանել: Նա Աստծուն դիմեց իր նեղության մեջ ու հանգստություն գտավ: Նա փորձառեց Տիրոջ օրհնությունը և կարողացավ հանգըստանալ Նրա բարության մեջ:

Խոսքը Դավթի մասին է: Թեև Տերը հանգստացրեց նրան, սակայն նա ստիպված էր ևս մեկ անգամ Տիրոջը դիմել օգնության համար: Հեշտ է պատկերացնել, թե երբ սա կարող էր տեղի ունենալ: Մեկ անգամ չէ, որ Դավիթը ստիպված էր փախչել Սավուդի դաժան նախանձից: Նույնիսկ այն ժամանակ, երբ վերջինս ընդունում էր իր սխալը, շատ չանցած՝ Դավիթը կրկին փախուստի էր դիմում՝ նրա չար մտադրություններից խուսափելու համար: Եվս մեկ անգամ Դավիթն արդարության Աստծուն խնդրեց լսել իրեն ու ողորմություն տարածել իր վրա:

Դավիթը հարցրեց, թե մարդիկ մինչև երբ պիտի փափագեն իր փառքը ամոթի վերածել, մինչև երբ պիտի փորձեն կործանել կամ նվաստացնել իրեն: Հակառակորդները կենտրոնացել էին բացարձակապես ոչ մի արժեք չունեցող բաների վրա:

Այս մարդիկ պետք է իմանային, որ Դավթի դեմ իրենց բոլոր գործողությունները չէին հաջողվելու: Տերն արդեն առանձնացրել էր աստվածապաշտներին Իր համար: Եթե Աստծո ձեռքը պաշտպանի Դավթին, նա ապահով կմնա: Այս գիտակցությամբ Դավիթը լիովին համոզված էր, որ Աստված լսելու ու պաշտպանելու էր իրեն:

Այնուամենայնիվ, մեզ հետաքրքրում է այն հարցը, թե ինչպես պետք է արձագանքենք նման իրավիճակներում, կամ ինչպես պետք է արձագանքենք անաստված մարդկանց նենգություններին: Դավիթը նշում է չորս կետ, որոնց պետք է հետևենք.

- Բարկացե՛ք և մեղք մի՛ գործեք: Որոշ մարդիկ սովորեցնում են, թե բարկանալը մեղք է՝ մոռանալով, որ Աստված ամեն օր բարկացած է ամբարիշտների վրա: Երբ Պողոսը Եփես. 4:26-ում

կրկնեց այս հրահանգը, ավելացրեց՝ ասելով. «Արևը ձեր բարկության վրա մայր չմտնի»: Կա այսպես կոչված արդար բարկություն:

- Խոսե՛ք ձեր սրտի հետ քնելուց առաջ ու լռե՛ք: Ինչի՞ շուրջ եք խորհում: Լավ է խորհրդածել մեր Աստծո շնորհալի ողորմությունների շուրջ, մտածել մեր հանդեպ Իր ցուցաբերած բարության և սիրո շուրջ: Երբ այդպես անենք, կտեսնենք, որ մեր սրտերը կհանդարտվեն Տիրոջ ներկայության մեջ:
- Արդարության գոհեր մատուցե՛ք: Թեև այլևս մեղքի համար կրկնվող գոհաբերություններ չենք մատուցում, այնուամենայնիվ կան գոհեր, որոնք անընդհատ մատուցում ենք Տիրոջը: Դրանց շարքին է պատկանում գոհաբանության գոհը՝ մեր շրթունքների պտուղը (Եբր. 13:15):
- Տիրոջը հուսացե՛ք: Իգուր է մարդուն վստահելը. մեր վստահությունը պետք է միայն Տեր Աստծո վրա լինի:

Շատերը փորձում են հուսահատեցնել մեզ՝ հարցնելով, թե ով պիտի բարություն անի մեզ: Դավիթը չհամաձայնեց պարտվել նրանց խոսքերից: Փոխարենը՝ նա աղոթքով դիմեց Տիրոջը՝ խնդրելով բարձրացնել Իր երեսի լույսը իր վրա: Եթե Տերը բարեհաճությամբ նայի, Նա կպահի մեզ բոլոր նեղությունների ժամանակ: Նա մեր սրտերում ուրախություն կդնի, որն ավելի մեծ է, քան այն ուրախությունը, որը որոշ մարդիկ ունենում են, երբ իրենց ցանքը առատ բերք է տալիս: Որպես արդյունք՝ Դավիթը կարողացավ հանգստանալ Տիրոջ ապահովության մեջ:

Արդյո՞ք սովորել ենք սաղմոսերգուի պես Տիրոջը նայել, արդյո՞ք նախ Տիրոջն ենք փնտրում դժվարությունների ժամանակ: Եթե այդպես է, ապա կարող ենք հանգիստ քնել՝ իմանալով, որ Տերը մեզ ապահով կբնակեցնի Իր խնամքի տակ:

Դոն Սթորմըր



«Զգո՛ւյշ եղիր, որ հանկարծ քո Տեր Աստծուն չմոռանաս...» (Բ Օր. 8:11)

Ինչո՞ւ կյանքը հաճախ դժվար է թվում: Ինչո՞ւ լուծում կամ վերջ գտնելու համար ստիպված ենք շարունակ պայքար մղել: Ինչո՞ւ սրտի խաղաղությունը, ճշմարիտ ուրախությունն ու անկեղծ սերը հազվադեպ հանդիպող բաներ են: Ինչո՞ւ է հիասթափությունն այդքան շատ: Ինչո՞ւ է մեր մեջ այդպիսի դատարկություն:

Մի՞թե սրանց պատճառը այն չէ, որ մենք մոռացել ենք ինչ-որ կարևոր բան: Այս տեսակի մոռացկոտությունն այնքան լուրջ է, որ մեր կյանքի ճնշվածության և տխրության պատճառը հեշտությամբ կարելի է բացատրել. մենք Աստծուն ենք մոռացել: Նա իրավունք ունի մեր կյանքի առաջնային տեղը զբաղեցնելու: Հետևաբար կենսականորեն կարևոր է, որ մտածենք Նրա մասին, խոսենք Նրա հետ և լսենք Նրան:

Բայց ո՞վ է Աստված: Ինչպե՞ս կարող ենք ճանաչել Նրան: Նա Արարիչն է: Մենք Նրա միջոցով ենք ստեղծվել և Նրա մեծությունն ու իմաստությունը կարող ենք ընկալել՝ նայելով Նրա ստեղծագործությանը: Նա Փրկիչ-Աստված է: Նա Իր Անձն ամբողջությամբ հայտնեց մեզ՝ Իր Որդուն երկիր ուղարկելով:

Մարդիկ ինչպե՞ս արձագանքեցին Աստծո այս հայտնությանը. Հիսուս Քրիստոսը խաչվեց մեղավոր մարդկանց կողմից: Դա շատ ավելի վատ է, քան Աստծուն մոռանալը: Դա ցույց է տալիս մարդկության հանդեպ Աստծո ունեցած սիրո և Իր Որդուն բացարձակապես մերժելու դիրքորոշումը:

Գուցե դուք նույնպես կորցրել եք Աստծո տեսիլքը ձեր կյանքի եռուզեռի մեջ: Բայց եթե Հիսուս Քրիստոսի միջոցով մոտենաք և պատմեք Նրան, որ ուզում եք ճանաչել Իրեն, ապա Աստված կպատասխանի ձեզ: Նա ձեզ կտա սրտի խաղաղություն, և այլևս Նրան երբեք չեք մոռանա:

Քաղված

Աստված նույնպես ատում է կրոնը

Մատթ. 23

Իմ խանութում հաճախ զրույց եմ սկսում գնորդների հետ և իմ վկայությունն եմ պատմում կամ կյանքի ու մահվան մասին մի քանի մտքեր եմ փոխանակում: Ոմանք քաղաքավարի ու դրական են արձագանքում, ոմանք էլ խուսափում են այդ թեմայից: Շատերն ասում են, որ չեն ուզում խոսել կրոնի մասին, ատում են կրոնն ու եկեղեցիները կամ չեն ուզում օժանդակել դրանց:

Ես այսպես եմ պատասխանում. «Ես նույնպես չեմ սիրում կրոնները, և գիտե՞ք, որ Աստված էլ չի սիրում դրանք: Ըստ էության՝ Աստված բնավ կրոն կամ կրոնական կազմակերպություն չի հիմնել»: Սա սովորաբար զարմացնում է նրանց, իսկ ես բավարարված ժպտում եմ: Բայց նախքան որևէ բառ կասեն, սովորաբար ավելացնում եմ. «Բայց գիտե՞ք՝ այն փաստը, որ մարդահոնար կրոնները մարդկանց կյանքը վերածել են խառնաշփոթի ու ավելի շատ չարիք, քան բարիք բերել, դեռ չի նշանակում, որ չկա Աստված, ու չկա Նրան գտնելու ճանապարհ»:

Այս խոսքերը կարողանում են լսել: Նրանք ատում են կրոններն ու կրոնական հաստատությունները, բայց պատրաստ են խոսելու Աստծո և Հիսուսի մասին: Եկեղեցու կամ կրոնների նկատմամբ այսպիսի բացասական և թշնամական վերաբերմունքի պատճառները նույնն են և շատ կանխատեսելի. կրոնը մեծ բիզնես է, կրոնը ինձ միայն կանոններ և օրենքներ է տվել, ուրիշ ոչինչ, նրանք մեզ կույր, դատարկ և ծարավ են պահել, նրանք խոսում են փրկության մասին, բայց մենք հենման կետ չենք գտնում, կրոնը խաբել է մեզ:

Սրանք այն դիտողություններից մի քանիսն են, որոնք ես լսում եմ մարդկանց հետ Աստծո մասին խոսելիս: Շատ ցավալի է լսել, թե ինչպես են մարդիկ մերժում Հիսուս Քրիստոսին ու նրա Ավետարանը և մեղադրում կրոնին ու եկեղեցուն: Աստվածաշունչն ասում է. «Ով որ Տիրոջ անունը կանչի, կփրկվի» (Հռոմ. 10:13):

Հարցը հետևյալն է. «Արդ ինչպե՞ս կանչեն, որին չհավատացին, ինչպե՞ս հավատան, որից չլսեցին, և ինչպե՞ս լսեն առանց քարոզի, և ինչպես քարոզեն, եթե չուղարկվեն» (Հռոմ. 10:14):

Մենք, որ գիտենք ճշմարտությունը, ինչպե՞ս կարող ենք մասնակից լինել մարդկանց ճշմարտությունը չպատմելու, չսովորեցնելու և չքարոզելու հանցանքին: Ինչպե՞ս կարող ենք այդքան հանգիստ լինել, երբ հավիտենական հոգիները սկանում են դեպի հավիտենական մահ՝ դեպի դժոխք: Աստծուն ի՞նչ պատասխան պետք է տան եկեղեցիներն ու հովիվները ոչխարներին ցիրուցան անելու և կործանելու համար:

Լսենք Աստծո խոսքերը.

«Վա՛յ այն հովիվներին, որ կորցնում և ցրում են իմ արոտի ոչ-խարներին,- ասում է Տերը: Դրա համար այսպես է ասում Տերը՝ Իսրայելի Աստվածը, այն հովիվների մասին, որ հովվում են իմ ժողովրդին: «Դուք իմ ոչխարներին ցրիվ տվիք և դուրս արիք և նրանց վրա տեսչություն չարիք, ահա ես ձեզ այցելություն պիտի անեմ ձեր գործերի չարության համար», - ասում է Տերը» (Երեմ. 23:1-2):

Գուցե ասեք. «Դե, դա Հին Կտակարանում էր»: Լսենք, թե ինչ է ասում Հիսուսը Նոր Կտակարանում.

«Վա՛յ ձեզ դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծավորներ, որ փակում եք երկնքի արքայությունը մարդկանց առաջ, որ ինքներդ չեք մտնում և մտնողներին էլ թույլ չեք տալիս մտնել: Վա՛յ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծավորներ, որ ուտում եք որբևայրիների տներում, և պատճառաւորով երկար աղոթք անում, դրա համար ավելի դատապարտություն կստանաք» (Մատթ. 23:13-15):

23-րդ գլուխն ամբողջությամբ պետք է նախազգուշացում լինի մեզ համար: Եթե Հիսուսն իր կյանքը տվեց եկեղեցու՝ մեզ համար, ապա ինչպիսի՞ն պետք է լինի այդ եկեղեցին, ինչպիսի՞ պատգամ պետք է քարոզի:

Եթե նայենք Գործք Առաքելոցի հավատացյալներին, կտեսնենք, թե ինչու էին նրանք Հիսուս Քրիստոսի Ավետարանի Բարի լուրը տարածելու մեջ այդքան արդյունավետ և օրհնված: Այն ասում է.

«Ու երբ նրանք աղոթում էին, շարժվեց այն տեղը, որտեղ միասին հավաքված էին, և բոլորը Սուրբ Հոգով լցվեցին ու Աստծո Խոսքը համարձակորեն էին քարոզում: Եվ հավատացյալների բազմությունը մեկ սիրտ և հոգի էր. և նրանցից ոչ մեկը չէր ասում, թե իր ստացվածքից որևէ բան իրենն է, այլ իրենց ամբողջ ունեցածն ընդհանուր էին համարում: Եվ մեծ գործությամբ առաքյալները վկայում էին Տեր Հիսուսի հարության մասին, և նրանց բոլորի վրա մեծ շնորհք կար (Գործք 4:31-33):

Քրիստոսը եկեղեցուց ու հավատացյալներից միայն սրբություն է պահանջում: Նա ակնկալում է, որ եկեղեցին քարոզի ոչ այլ ինչ, քան ճշմարիտ Ավետարանն է:

Աստծո հրեշտակը խիստ հրահանգներ տվեց առաքյալներին.

«Գնացե՛ք և կանգնեցե՛ք տաճարի մեջ և այս կյանքի բոլոր խոսքերը խոսեցե՛ք ժողովրդի հետ: Եվ երբ որ լսեցին, առավոտյան մտան տաճարը և սովորեցնում էին, քահանայապետն էլ եկավ, և նրանք էլ նրա հետ էին, և կանչեցին ատյանը և Իսրայելի որդիների բոլոր ծերակույտը մեկտեղ, և ուղարկեցին բանտը, որ բերեն նրանց» (Գործք 5:20-21):

Մի՞թե այսօր եկեղեցին պետք է «նոր կյանքի ամբողջական պատգամից» պակաս բան քարոզի: Կարծում եմ, որ յուրաքանչյուր եկեղեցու առաջնորդ և յուրաքանչյուր հավատացյալ պետք է պատասխանի այս հարցին:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան



«Երանի՜ բոլոր նրանց, որ վախենում են Տիրոջից ու քայլում են Նրա ճանապարհներով: Քանի որ քո ձեռքերի աշխատանքն ես ուտելու, օրհնութուն ես ունենալու ու բարգավաճելու ես: Քո կինը մի պտղաբեր որթատունկի է նմանվելու՝ քո տան ներսում, քո որդիները ձիթենու տնկիների նման են լինելու սեղանիդ շուրջը: Ահա, Տիրոջից վախեցող մարդն այսպե՛ս է օրհնվելու:»

Սաղ. 128:1-4

Քսան երկար տարիներից հետո

Նաթիաթուս Սթեչը՝ մեծ միսիոները, հետևյալն էր պատմում այն մեծ արթնության մասին, որ տեղի էր ունեցել իր միսիոնարության օրերին:

Քսան տարի գործեցի բևեռաբնակ այդ ժողովրդի մեջ՝ կատաղի հալածանքների ենթարկվելով: Իմ ամեն մի շարժումը երևութապես սխալ էր հասկացվում: Այս ժողովրդին, որին շատ սիրեցի, դեպի Քրիստոսը շահելու համար թափած բոլոր ջանքերս ծաղրանքի էին ենթարկվում: Մերժվում էր ամեն ինչ: Սակայն վերջնական հաղթանակի համար իմ ունեցած հավատքը երբեք չխախտվեց: Վստահ գիտեի, որ Նա, ով կանչել է ինձ, հավատարիմ է և կարող է հրաշքով պարտության մատնել ինձ հալածողներին և նրանց դարձնել Իր սիրո գերիները: Այդ սպասման տարիների ընթացքում թարգմանում էի աստվածաշնչյան հատվածները նրանց լեզվով: Հավատում էի, որ «Աստծո խոսքը կենդանի է ու զորավոր, և ամեն մի երկսայրի սրից ավելի կտրուկ...»: Համոզված էի, որ Տերը հաղթական է դուրս գալու:

Մի օր՝ քսան երկար տարիների հոգնատանջ աշխատանքից հետո, խրճիթիս մեջ նստած՝ բարձրաձայն կարդում էի Հովհաննեսի Ավետարանի 3-րդ գլուխը: Շուրջս պատահող դեպքից բոլորովին անտեղյակ՝ շարունակում էի ընթերցումս: Բնիկների մեջ ինձ ամենաշատը հալածող գլխավոր մարդը կանգնած էր դռան հետևում. իմ շուրթերից դուրս եկած բոլոր խոսքերը ուշադրությամբ լսում էր՝ յուրացնելով դրանք իր սրտում: Հանկարծ պռոթկումով մերս մտավ և պահանջեց, որ նույն հատվածը դարձյալ կարդամ: Կարդացի: Ասաց. «Կրկին կարդա»: Կրկին կարդացի այդ սքանչելի գլուխը: Սրբազան էջերում գտնվող ճշմարտության խոսքերը ուժգին հարվածներ էին հասցնում այդ քարսիրտ ու դաժանաբարո հայհոյողին: Նա դողդողալով մոտեցավ ինձ և խնդրեց, որ փրկության ճամփան բացատրեմ իրեն: Հետո դուրս եկավ անաղմուկ: Գնաց ժողովրդին կանչելու, որպեսզի նրանք ևս գան Աստծո Խոսքը լսելու: Մինչ ես խոսում էի, ճիշտ Կոռնելիոսի տան մեջ պատահածի պես մի բան տեղի ունեցավ: Աստծո Հոգին

գործությամբ իջավ մեզ վրա: Բոլորը կոտրվեցին և արցունքներով ծընկաչոք սկսեցին ներում խնդրել Աստծուց իրենց մեղքերի համար: Փրկության ցնծությունը և հունձքի ուրախությունն այնքան մեծ էր մեր մեջ, որ բոլորս սկսեցինք շնորհների Աստծուն փառաբանել:

Ինձ հալածողները ներողություն խնդրեցին նաև ինձանից: Ու մենք հարազատների պես ողջագուրվեցինք: Այնքա՛ն քաղցր էր Աստծո ներկայությունով ջերմացած հաշտության այդ պահը: Իմ թշնամիները դարձան իմ մտերիմ բարեկամները:

Ձորավոր հրդեհի բոցերի պես արթնության լուրերը տարածվեցին հեռավոր վայրեր: Անակնկալ կերպով քսան տարի ցանված սերմերի հունձքի ժամանակը հասել էր վերջապես: Հարյուրավոր անմահ հոգիներ Քրիստոսին ընդունեցին որպես իրենց Փրկչի: Նրանցից շատերը դարձան իրենց ժողովրդի մեջ գործող միսիոներներ: Իմ դառն ու դժվար տարիների մեջ ունեցած երբեք չնահանջող, երբեք չհուսահատվող հավատքը և հույսերը առատ պտուղ տվեցին: Մենք անսահման ուրախությամբ փառավորեցինք հունձքի Տիրոջը: Անկասկած, այս ամենը մեզ վրա իջնող Սուրբ Հոգու գործն էր:

Քաղված՝ «Չմայլելի դրվագներ» գրքից



«Ո՞վ պիտի մեզ բաժանի Քրիստոսի սիրուց՝ տառապա՞նքը, վի՞շտը, հալածա՞նքը, սո՞վը, մերկությո՞ւնը, վտա՞նգը, թե՞ սուրը: Ինչպես գրված է. «Բեզ Համար ամեն օր սպանվում ենք և մորթվելու ոչխար Համարվում»: Ո՛չ, այս ամենի մեջ մենք ավելի քան հաղթողներ ենք Նրանով, Ով մեզ սիրեց, որովհետև համոզված եմ, որ ո՛չ մահը, ո՛չ կյանքը, ո՛չ հրեշտակները, ո՛չ իշխանությունները, ո՛չ գորությունները, ո՛չ ներկա և ո՛չ էլ գալիք բաները, ո՛չ բարձրությունը, ո՛չ խորությունը, ո՛չ էլ մի ուրիշ արարած չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի մեջ է:»

Հռոմ. 8:35-39

Մեծ ճերմակ գահի դատաստանը և վերջին իրադարձությունները (2)

3. Նոր Երկինք և նոր Երկիր (21:1)

Մենք հիմա գալիս ենք այն նկարագրությանը, որն իսկապես կարող է կոչվել հավերժական վիճակ, մշտական հաստատված վիճակ, որում Աստված հավիտյան բնակվելու է Իր փրկագնված ժողովրդի հետ: Կլինեն երկնային և երկրային ժողովուրդներ, բայց երկրի վրա այլևս ազգեր չեն լինի:

Ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ միայն Հայտ. 21:1-8-ը վերաբերում է հավերժական վիճակին, մինչդեռ Հայտ. 21:9-ից մինչև Հայտ. 22:5-ը՝ Հազարամյակին կամ Քրիստոսի 1000-ամյա քաղաքությունը հին երկրի վրա: Երբ այս երկու հատվածները համեմատվեն, կնկատվի, որ կան մի քանի տարբերություններ: Հետևյալ աղյուսակը պետք է օգտակար լինի:

	Հայտ. 21:1-8	Հայտ. 21:9 - 22:5
Աստվածային անուններ	Աստված (չորս անգամ)	Գառնուկը (յոթ անգամ) Տեր Աստված Ամենակալ (մեկ անգամ) Աստված (հինգ անգամ) Տեր Աստված (մեկ անգամ)
Հրեշտակներ	Չի հիշատակված	Չորս անգամ հիշատակված
Սուրբ քաղաքը	Նոր Երուսաղեմ	Երուսաղեմ
Ազգեր	Չեն հիշատակված	Երեք անգամ հիշատակված
Ծով	Այլևս ծով չի լինի	Չի հիշատակված, բայց ենթադրվում է: Տե՛ս նաև Ես. 11:9 և 60:5-ը:

Չափումներ	Չի հիշատակված	Չորս հատուկ չափումներ՝ «մարդու չափով» արված:
-----------	---------------	---

Եկե՛ք մի պահ կանգ առնենք և հարցնենք ապագայի մասին: Ի՞նչ են ասում մարդիկ ապագայի մասին: Պետրոս առաքյալի օրերում կային ոմանք, ովքեր ասում էին. «Մեր հայրերը ննջեցին, բայց ամեն ինչ շարունակվում է այնպես, ինչպես արարչագործության սկզբից էր» (Բ Պետ. 3:4): Շատ ավելի կարևոր է այն հարցը, թե ինչ ասաց Տեր Հիսուսը ապագայի մասին: Նա ասաց. «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց Իմ խոսքերը պիտի չանցնեն» (Մատթ. 24:35): Նա նաև ասաց. «Ավելի հեշտ է, որ երկինքն ու երկիրը անցնեն, քան Օրենքից որևէ փոքրիկ նշանագիր պակասի» (Դուկ. 16:17): Սաղմոսերգուն ասաց. «Բո խոսքը, ո՛վ Տեր, հավիտյան հաստատուն է երկնքում» (Սաղ. 119:89): Շատերի կարծիքով՝ ներկայիս ստեղծագործությունը շարունակվելու է անորոշ ժամանակով և գուցե ավելի կլավանա, բայց Աստծո Խոսքը շուտով կմոռացվի և կվերանա: Որքա՞ն տարբեր է Աստծո տեսակետը այս բաների վերաբերյալ: Որքա՞ն կարևոր է լսել, թե Աստված ինչ է ասում ապագայի մասին:

Պողոս առաքյալն ասում է մեզ, որ Տեր Հիսուսը կթագավորի երկրի վրա, մինչև որ Իր բոլոր թշնամիներին դնի Իր ոտքերի տակ: Վերջին թշնամին, որ կկործանվի, մահն է (Ա Կորնթ. 15:25-26): Մենք հենց նոր տեսանք, որ մենք սպիտակ գահի դատաստանից անմիջապես հետո «մահն ու դժոխքը նետվեցին կրակի լիճը» (Հայտ. 20:14): Այսպիսով, մահը ոչնչացվեց: Պողոսն ասում է այս մասին. «... Այն ժամանակ Որդին էլ Ինքն Իրեն պիտի ենթարկի Նրան, Ով ամեն ամեն ինչ ենթարկեց Իրեն, որպեսզի Աստված լինի ամենն ամեն բանի մեջ» (Ա Կորնթ. 15:28): Ահա թե ինչու է միայն «Աստված» անունը հիշատակվում Հայտ. 21:1-8-ում:

Պետրոս առաքյալը մեզ լրացուցիչ տեղեկություն է տալիս այն սարսափելի իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենալու ժամանակների վերջում: Նա ասում է. «...Երկինքը սաստիկ շառաչյունով պիտի անցնի և տարրերը խիստ տաքությունից պիտի լուծվեն, երկիրը և նրա մեջ եղող գործերը պիտի այրվեն: Ուստի քանի որ այս ամենը հալվելու է, ինչպիսի՞ մարդիկ պետք է լինեք դուք՝ սուրբ վարքով և

բարեպաշտությամբ, սպասելով ու փութալով Աստծո օրվան գալուն, որի հետևանքով երկինքները կրակով բռնկված պիտի լուծվեն և տարրերը խիստ տաքությունից պիտի հալչեն» (Բ Պետ. 3:10-12):

Եբրայեցիներին գրողն ասում է երկրի և երկնքի մասին. «Դրանք պիտի կորչեն, բայց Դու կմնաս, և բոլորը լաթի նման պիտի մաշվեն, և վերարկուի պես պիտի ոլորես դրանք, ու դրանք պիտի փոխվեն. բայց Դու նույնն ես» (Եբր. 1:11-12):

Այս բոլոր համարները հստակորեն մատնանշում են մի ժամանակ, երբ ներկայիս երկինքն ու երկիրը այրվելու են: Այնուհետև դրանք փոխարինվելու են նոր երկնքով և նոր երկրով. նոր ստեղծագործություն, որը նախատեսված է հավետ գոյատևելու համար:

«Ի՞նչ կլինի այն հավատացյալների հետ, ովքեր կլինեն երկրի վրա Հազարամյակի ավարտին»: Սուրբ Գիրքը մեզ կոնկրետ պատասխան չի տալիս այս հարցի վերաբերյալ, բայց մենք կարող ենք ենթադրել, որ նրանք կհեռացվեն հին երկրից, կվերակազմավորվեն և կվերաբնակվեն նոր երկրի վրա, որը կդառնա նրանց հավիտենական տունը:

«Արդյո՞ք այս մարդիկ նոր երկրի նոր ազգերն են լինելու»: Սուրբ Գիրքը մեզ կոնկրետ պատասխան չի տալիս այս հարցի վերաբերյալ: Այնուամենայնիվ, Շննդ. 11-րդ գլխից գիտենք, որ Տերը դատաստան արեց այդ ժամանակվա ազգերին: Մենք կարդում ենք. «Տերն այնտեղից խառնակեց ամբողջ երկրի լեզուն» (Շննդ. 11:9): Բայց հավիտենական վիճակում ազգերի կարիք չի լինի, և այսպես կարդում ենք. «Ահա՛ Աստծո խորանը մարդկանց մեջ, և Նա նրանց հետ պիտի բնակի» (Հայտ. 21:3):

Հովհաննեսը նաև տեսավ, որ այլևս ծով չկա: Սակայն մեծ հազարամյալի հինկտակարանյան հատվածներում կարդում ենք ծովի մասին. «Ամբողջ երկիրը լցվելու է Տիրոջ գիտությամբ, ինչպես ջրերը ծածկում են ծովը» (Ես. 11:9): Հազարամյակում ապրանքները նավով կտեղափոխվեն ծովով. «Ծովի առատությունը քեզ է դառնալու, և հեթանոսների հասությունը քեզ է գալու» (Ես. 60:5): Այնուամենայնիվ, հավերժական վիճակում պայմանները շատ տարբեր կլինեն. ծով չի լինի:

4. Սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղեմը (21:2-5)

Ամբողջ մարդկությունը՝ սկսած Ադամից մինչև նրանք, ովքեր կծրվեն մինչև Հազարամյայի ավարտը, հավերժ բնակվելու են երեք վայրերից մեկում, այսինքն՝ Կրակի լճում (Հայտ. 19:20, 20:10, 14, 15), Սուրբ քաղաքում կամ Նոր երկրում (Հայտ. 21:1, Բ Պետ. 3:13): Ներկա ժամանակի հավատացյալները հավերժ բնակվելու են Սուրբ քաղաքում:

Նախորդ ուսումնասիրության մեջ նշեցինք, որ Հովհաննեսը երեսուներկու անգամ ասում է՝ տեսա: Այստեղ ուսումնասիրության մեջ արդեն դիտարկեցինք դրանցից երկուսը (Հայտ. 20:11, 12), իսկ այժմ հասնում ենք ամենավերջին երկուսին. «Եվ մի նոր երկինք ու նոր երկիր տեսա» և «Սուրբ քաղաքը՝ նոր Երուսաղեմը տեսա» (Հայտ. 21:1, 2): Ինչպես արդեն նշվեց, այս երեսուներկու տեսիլքներից տեղեկանում ենք Քրիստոսի 1000-ամյա թագավորության, չարերի և բոլոր թշնամիների վրա Նրա վերջնական դատաստանների (հմմտ. Ա Կորնթ. 15:25-28), հին երկնքի ու երկրի կործանման և նոր երկնքի ու նոր երկրի համայնապատկերի մասին:

Հովհաննեսը մեզ նոր երկնքի ու նոր երկրի մասին ոչինչ չի ասում: Փոխարենը, նա պատմում է՝ ասելով. «Սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը տեսա, որ Աստծուց ցած էր իջնում երկնքից՝ պատրաստված, որպես իր ամուսնու համար զարդարված մի հարս» (Հայտ. 21:2): Սուրբ քաղաքում բնակվողները կազմված կլինեն Քրիստոսի ճշմարիտ եկեղեցուց (Եփես. 5:32): Մենք հավատում ենք, որ նրանց հետ կլինեն Հին Կտակարանի հավատացյալները և նրանք, ովքեր հավատքի եկան ու մահացան Մեծ մեղության ժամանակաշրջանում: Այս վերջին խումբը կամփոփի առաջին հարությունը (Հայտ. 20:4-6): Բայց հիմնականում Եկեղեցին՝ Քրիստոսի հարսը, կցուցադրվի իր կատարելությամբ, փառքով ու պայծառությամբ հավիտենական դարերում: Նման վիճակը կարող է վերագրվել միայն մեկ բանի, այսինքն՝ Քրիստոսի սրբազործող արյանը (Ա Հովհ. 1:7, Հայտ. 1:5, 7:14):

Այնուհետև Հովհաննեսը բարձր ձայն է լսում գահից, որն ասում է. «Ահա՛ Աստծո խորանը մարդկանց մեջ, և Նա նրանց հետ պիտի բնակվի, և նրանք Իր ժողովուրդն են լինելու, և Աստված Ինքը նրանց

հետ է լինելու՝ որպես նրանց Աստված» (Հայտ. 21:3): Սա մի բան է, որ Աստված փափագել էր հենց սկզբից: Եսայի մարգարեն հայտարարել էր. «Ահա կույսը կհղիանա և որդի կծնի և նրա անունը Էմմանուել կկոչի» (Ես. 7:14): Այս անվան իմաստն է՝ «Աստված մեզ հետ» (Մատթ. 1:23): Եվ այսպես, երբ Հիսուսը ծնվեց Բեթղեհեմում, Նա «Աստված մեզ հետ» էր: Բայց երկրի վրա Իր գործն ավարտվելուց հետո Նա երկինք բարձրացավ: Ճիշտ է, Նա կվերադառնա Իր սրբերի հետ և կթագավորի երկրի վրա Հազարամյայի ընթացքում, սակայն Հայտ. 21:3-ի պնդումը շատ ավելի խորն է, քան պատկերացումն ենք. Աստծո բնակարանը մարդկանց հետ է, և Նա կապրի նրանց հետ: Նրանք կլինեն Աստծո ժողովուրդը, և Նա կլինի նրանց հետ և կլինի նրանց Աստվածը: Եվ սա կլինի Նրա ժողովրդի հավիտենական վիճակը:

Ներկայիս կյանքի վշտերն ու ծանրությունը ընդմիշտ կվերանան: Այլևս չի լինի արցունք, մահ, սուգ, լաց կամ ցավ: Ինչպիսի՞ օր կլինի դա բոլոր դարերի փրկագնվածների համար:

Մեզ չի ասվում, թե ում ձայնն էր, որ եկավ գահից (հմր 3), բայց կասկած չունենք, թե ով է հիմա խոսում. «Եվ Նա, որ գահի վրա էր նստած, ասաց. «Ահա, ամեն ինչ նորից եմ անում»... «Եղավ, ես եմ Ալֆան և Օմեգան՝ սկիզբն ու վերջը: Ես ծարավիմ ձրի եմ տալու կենաց ջրի աղբյուրից...» (հմր 5-6):

Հայտնության գրքում կրկնվում են այս երկու աստվածային տիտղոսները: Կա նաև երրորդը: Առաջինը և Վերջինը, և սա բացառապես օգտագործվում է Տեր Հիսուսի կողմից: Առաջին երկու տիտղոսներն օգտագործվում են Աստծո, Տեր Աստծո և Տեր Հիսուսի կողմից: Սա ևս մեկ ապացույց է, որ Հիսուսն Աստված է:

Աստվածային տիտղոսը	Հղումը	Խոսողը
Ալֆան և Օմեգան	Հայտ. 1:8 Հայտ. 21:6 Հայտ. 22:13	Տեր Աստված Աստված Տեր Հիսուսը

Սկիզբն ու Վերջինը	Հայտ. 21:6	Աստված
	Հայտ. 22:13	Տեր Հիսուսը
Առաջինը և Վերջինը	Հայտ. 1:17, 2:8, 22:13	Տեր Հիսուսը

Ալֆան և Օմեգան հունարեն այբուբենի առաջին և վերջին տառերն են: Հունարենը այն լեզուն է, որով ի սկզբանե գրվել է Նոր Կտակարանը: Դրանցով կազմում ենք բառեր ու մախադասություններ, որոնց միջոցով շփվում ենք: Աստված և Տեր Հիսուսը՝ որպես Ալֆան և Օմեգան, մեզ կհիշեցնեն, որ Աստված հաղորդակցվել է մեզ հետ: Ավելի կոնկրետ՝ Տեր Հիսուսը Խոսքն է, և Իր միջոցով Աստված հայտնվեց մեզ (Հովհ. 1:1, 18):

Տերը, խոսելով Եսայի մարգարեի միջոցով, ասաց. «Ես եմ առաջինը, և ես եմ վերջինը» (Ես. 44:6, 48:12): Նա է միակ ճշմարիտ Աստվածը, և ուրիշը չկա: Նա Ժայռն է, և ուրիշին չգիտի (Ես. 44:8): Նա է միշտ գոյություն ունեցողը՝ հավիտենական Աստվածը (Բ Օր. 33:27): Այսպիսով, երբ Տեր Հիսուսն ասում է Հովհաննես առաքյալին՝ «Ես եմ Առաջինը և Վերջինը», Նա մույն ճշմարտությունն է հայտարարում Իր մասին:

Գահին նստողը Հովհաննեսին նաև ասում է. «Գրի՛ր, քանի որ այս խոսքերը ճշմարիտ են ու հավատարիմ» (Հայտ. 21:5): Աստված գիտեր, որ մարդիկ դարեր շարունակ կծաղրեն այս թանկագին Գիրքը և կմերժեն այն: Այսպիսով, Հովհաննեսը քաջ գիտակցում է, որ «այս խոսքերը [իսկապես Գրքի բոլոր խոսքերը] վստահելի են ու ճշմարիտ»: Հենց այս խոսքերը, որոնք առաջինն ասվել են Աստծո կողմից, կրկնում է հրեշտակը (Հայտ. 22:6): Երկու անգամ Տեր Հիսուսը հիշատակվում է որպես հավատարիմ և ճշմարիտ (Հայտ. 3:14, 19:11), և երեք անգամ ասվում է, որ Աստծո դատաստաններն ու ճանապարհները ճշմարիտ են ու արդար (Հայտ. 16:7, 19:2, 15:3): Իսկ Ֆիլադելֆիայի եկեղեցուն դիմելիս Տերն Իրեն սուրբ և ճշմարիտ է հռչակում, իսկ նահատակները Նրան դիմում են՝ ասելով. «Ո՛վ սուրբ և ճշմարիտ Տեր» (Հայտ. 3:7, 6:10): Ուստի մենք պետք է ընդունենք այս Գիրքը (իսկապես Աստծո Խոսքը)՝ որպես բացարձակ ճշմարտություն: Տեր Հիսուսն աղոթեց. «Սրբացրո՛ւ նրանց Քո ճշմարտությամբ. Քո խոսքը ճշմարտություն է» (Հովհ. 17:17):

Կապույտ ուլունքներով վզնոցը

Պիտեր Ռիչարդսը միայնակ մարդ էր, որ իր պապից ժառանգած նվերների խանութ ուներ մի փոքրիկ քաղաքում: Նա տխուր երիտասարդ էր, հազիվ 30 տարեկան, բայց մազերն արդեն սկսել էին ճերմակել:

Չմեռնային մի օր մի աղջիկ էր կանգնել Պիտերի խանութի ցուցափեղկի առջև և ուշադիր դիտում էր այնտեղ դրված զանազան առարկաները՝ մատանիներ, մանյակներ, արձանիկներ և այլն: Հայտնի էր, որ հատուկ բան էր փնտրում: Վերջապես աղջնակի աչքերը փայլեցին, և ներս մտավ:

Սեղանի մոտ կանգնած էր Պիտերը: Նա նայեց փոքրիկ հաճախորդին, որն ասաց.

- Պարո՛ն, կարո՞ղ եմ ցուցափեղկում է դրված կապույտ ուլունքներով վզնոցը տեսնել:

Պիտերը վարագույրը քաշեց և վերցրեց վզնոցը: Կապույտ քարերով փայլեցին նրա ձեռքում, երբ այն դնում էր սեղանի վրա:

- Հենց սա էր փնտրածս, - բացականչեց աղջնակը: - Խնդրում եմ՝ այն փաթեթավորե՛ք ինձ համար:

Պիտերը, աղջկան նայելով, ասաց.

- Ինչ-որ մեկի համա՞ր ես գնում այն:

- Այո՛, - պատասխանեց գնորդը: - Մեծ քրոջս համար է, որ իմ մասին հոգ է տանում: Սա մեր առաջին Սուրբ Ծնունդն է մայրիկիս մահից հետո: Սքանչելի նվեր էի փնտրում քրոջս համար:

- Որքա՞ն դրամ ունես, - հարցրեց Պիտերը ուշադրությամբ:

Աղջիկը մի կտոր հանեց գրպանից և ունեցած լումաները թափեց սեղանի վրա:

- Գանձանակս դատարկեցի, - ասաց պարզությամբ:

Պիտեր Ռիչարդսը մտածկոտ հայացքով նայեց նրան: Ապա վզնոցը վերցրեց և գնին նայեց: Ինչպե՞ս կարող էր հասկացնել նրան. աղջնակի ուրախ աչուկները սիրտը խոցեցին:

- Մեկ բուպե, - ասաց նա և ներս գնաց: - Անունդ ի՞նչ է, - հարցրեց, երբ փաթեթավորում էր նվերը:

- Ջին Գրեյս, - պատասխանեց աղջնակը:

Պիտերը գեղեցիկ կարմիր թղթով և կանաչ ժապավենով փաթեթավորեց տուփը և տվեց աղջնակին ու ասաց.

- Ձգո՛ւյշ եղիր, որ ճանապարհին չկորցնես նվերը:

Ջին Գրեյսը ժպտաց և խանութից դուրս վազեց ուրախությամբ:

Պիտերը նայեց պատուհանից, և սիրտը ճնվեց: Աղջնակի ոսկեգույն մազերը և կապույտ աչքերը նրան հիշեցրին իր սիրած օրիորդին, որի համար նախատեսված էր այս կապույտ վզնոցը: Սակայն անձրևոտ ձախավեր մի օր ավտովթարի արկածով նա մահացավ՝ ջախջախելով Պիտերի երազը: Դրանից հետո նա տխուր ապրում էր և շարունակում իր գործը: Նրա կյանքն անիմաստ էր, աննպատակ:

Ջին Գրեյսի կապույտ աչքերը ցնցել էին այս երիտասարդին, քանի որ դարձյալ հիշել էր իր ունեցած կորուստը: Հաջորդ տասը օրերին գործը զբաղված պահեց նրան: Ճրագալույցի գիշերը նա խոր շունչ քաշեց. մեկ տարի ևս բոլորեց այս շրջանը: Սակայն Պիտեր Ռիչարդսի համար գիշերը դեռ վերջացած չէր:

Հանկարծ խանութի դուռը բացվեց. և մի երիտասարդ օրիորդ ներս մտավ: Անհասկնալի կերպով Պիտերին թվաց, թե իրենք ծանոթ են: Մազերը ոսկեգույն էին. աչքերը՝ խոշոր, կապույտ: Առանց խոսելու՝ նա պայուսակից մի տուփ հանեց, որի կարմիր թուղթը և կանաչ ժապավենը մասամբ բացված էին, և միջից երևում էր կապույտ ուլունքներով վզնոցը:

- Սա ձեր խանութի՞ց է, - հարցրեց նա:

- Այո՛, - մեղմորեն ասաց Պիտերը՝ նրա աչքերին նայելով:

- Քարերը բնակա՞ն են:

- Այո՛, բայց ոչ առաջնակարգ:
- Հիշո՞ւմ եք, թե ում եք վաճառել այն:
- Այո՛, Ջին անունով փոքրիկ մի աղջկա: Նա մեծ քրոջ համար որ-
պես Սուրբ Ծնունդի նվեր գնեց:
- Որքա՞ն էր գինը:
- Գի՞նը, - ասաց Պիտերը լրջությամբ, - վաճառողի և հաճախորդի
միջև գաղտնի է:
- Ջինը մի քանի լումայից ավելի դրամ երբեք չի ունեցել: Ինչպե՞ս
կարողացավ վճարել սրա համար:
- Նա ամենամեծ գինը վճարեց: Իր ունեցած ամբողջ գումարը տվեց,
- ասաց Պիտերը, տուփը փակեց և նորից փաթեթավորեց գեղեցիկ
թղթով:

Լռություն տիրեց փոքրիկ խանութում: Երիտասարդը լսեց եկեղեցու
զանգերի դողանջը: Փոքրիկ ծրարը սեղանի վրա էր: Աղջկա աչքերում
կար անպատասխան հարց, և հենց այդ պահին անհասկնալի սիրո
կայծ սկսեց վառվել երիտասարդի սրտում: Ու այս բոլորը սկսվեց
փոքր աղջկա անկեղծ սիրուց:

- Բայց ինչո՞ւ արեցիր, - հարցրեց շփոթված օրիորդը:

Պիտերը նվերը վերցրեց ձեռքի մեջ և ասաց.

- Արդեն սուրբծննդյան առավոտ է: Իմ դժբախտությունն է, որ չունեմ
մեկը, ում կարող եմ նվեր տալ: Կարելի՞ է քեզ ընկերակցել մինչև
տուն և ուրախ Ծնունդ մատթել ձեր դռան առջև:

Եվ երբ եկեղեցու զանգերը ուրախ հնչում էին, Պիտեր Ռիչարդսը
օրիորդի հետ, որի անունն անգամ չգիտեր, սկսեց քայլել սուրբծննդ-
յան նոր օրվա մեջ, որը հույս էր ներշնչում ողջ մարդկությանը:

«Լացը կարող է շարունակվել գիշերը, բայց առավոտյան ուրա-
խություն է գալիս: Իմ սուգը պարի վերածեցիր, քուրճա հանեցիր ու
ինձ խնդություն հագցրիր» (Սաղ. 30:5, 11):

Քաղված՝ «Բարեպառու ձիթենին» գրքից

Դեպի Բեթել

Ծննդ. 35:1-3

Ծննդոց 35-րդ գլխում Աստված ասում է Հակոբին, որ դեպի Բեթել գնա ու այնտեղ բնակվի: 28-րդ գլխում կարդում ենք, որ Հակոբը ճամփորդեց ու երբ որոշակի տեղ հասավ, գիշերեց: Երբ քնեց, երազ տեսավ. երկնքից մինչև երկիր սանդուղք էր դրված, և Աստծո հրեշտակները բարձրանում ու իջնում էին: Եվ ահա Տերը կանգնեց դրա վրա ու ասաց իրեն. «...Եվ այն երկիրը, որ Աբրահամին և Իսահակին տվի, քեզ կտամ և քեզանից հետո քո սերնդին կտամ այդ երկիրը... և ահա Ես քեզ հետ եմ, և ամեն տեղ՝ ուր որ գնաս, կպահեմ քեզ և քեզ այս երկիրը կվերադարձնեմ»: Եվ Հակոբն այն տեղի անունը, որտեղ Աստված իր հետ խոսել էր, Բեթել դրեց»: Բեթելում Տերը երևաց ու խոստում տվեց Հակոբին, որ նրա Աստվածն է լինելու, ինչպես նրա հայրերի Աստվածն էր, աճեցնելու է նրա սերունդը ու օրհնելու է նրան, նրա հետ է լինելու ու նրան պահպանելու է:

Հին Կտակարանից գիտենք, որ Հակոբը խաբեբա էր: Նա իր հորը՝ Իսահակին, խաբեց, որպեսզի իր եղբոր՝ Եսավի օրհնությունը ստանա: Սակայն հակառակ այդ դեպքին, Աստված արդեն սկզբից խոստացել էր Հակոբի Աստվածը լինել: 28-րդ գլխից մինչև 35-րդ գլուխը 30 տարի էր անցել, և այդ ժամանակամիջոցում Հակոբը մոռացել էր Բեթելը՝ Աստծո տունը: Սակայն Աստված, Իր խոստման համաձայն, Հակոբին հիշեցրեց, որ Բեթել պետք է գնա: Տեսնում ենք, որ Աստված Ինքն է մեզ կանչում, Ինքն է առաջին քայլը կատարում և Ինքնիրեն հայտնում մեզ: Հակոբը հիշեց, որ ինքն էլ Աստծուն խոստում էր տվել, որ եթե իրեն պահպանի, հաց տա, առաջնորդի, իր Աստվածը կլինի: Սակայն կարծես մոռացել էր դրա մասին, որովհետև երեսուն տարի Աստծուց հեռու էր ապրել և վստահել էր իր իմաստությամբ: Ժամանակն էր, որ Բեթել՝ Աստծո տուն վերադառնար:

Աստված Հակոբին ասաց, որ Բեթել գնա ու այնտեղ բնակվի: Այս աստվածային կանչին կամ կոչմանը պատրաստվելու համար որոշ հավատքի քայլեր էին պետք: Հակոբն իր ընտանիքին և իր հետ գրտ-

նըվողներին հետևյալը ասաց. «Հեռացրե՛ք օտար աստվածներին, որ կան ձեր մեջ»: Հակոբը և իր ընտանիքը, Եհովա Աստծուց հեռանալով, օտար աստվածների էին երկրպագում: Աստված ասել էր, որ երկու տերերի չենք կարող ծառայել: Ասում են, թե Անգլիայի թագավորներից մեկը փորձել էր միաժամանակ պաշտել սատանային և Աստծուն, ուստի իր եկեղեցում երկու խորան էր կառուցել: Իր վահանի վրա երկու տարբեր նկարներ էին պատկերված, մեկը՝ Աստծո խաչը, մյուսը՝ սատանայի պատկերը: Նա այս ձևով դրժում էր Աստծո խոսքը՝ ասելով, թե ինքը կարող է երկու աստված պաշտել: Պատմությունը փաստում է, որ այդ թագավորը հաջողություն չգտավ: Երբ Հակոբն իր ընտանիքով օտար աստվածների էր պաշտում, Եհովա Աստծուց հեռու էր: Այս նույն խոսքը՝ «Հեռացրե՛ք օտար աստվածներին»: Քեզ եմ ուղղում հարցս. «Ի՞նչն է քո օտար աստվածը, որ Աստծո տեղն է գրավել»: Երբ Հիսուսը Ղազարոսին մեռելներից պիտի հարուցաներ, ասաց. «Այդ քարը վերցրե՛ք»: Մենք նույնպես մեր կյանքում եղող քարերը պետք է մի կողմ գլորենք, որպեսզի Տերը կյանքի կոչի այն, ինչ որ մեր մեջ մեռած է: Մեր կյանքում գտնվող այդ քարերը, որ մեր Աստծո ու մեր միջև են կանգնած, մեր չաստվածներն են: Այդ քարից կարող է լինել իմ ընտանիքը, իմ ասպարեզը, գործը, դրամը... և այլն: Որևէ բան ինքնին վատ չէ, բայց երբ Աստծո տեղն է գրավում, չաստված է դառնում: Բեթել՝ Աստծո տուն գնալիս այդ բոլորը պետք է մի կողմ դնենք:

Երկրորդ՝ նա ասաց. «Մաքրվե՛ք»: Հակոբի ընտանիքում շատ դեպքեր էին պատահել (Հակոբի որդիները սրով սպանել էին Սաղեմ քաղաքի արու բնակիչներին և Սյուքեմին, ով իրենց քրոջը պղծել էր), ուստի պետք է մաքրվեին այդ վիճակից: Երբ ուզում ենք գտնվել Տիրոջ ներկայության առջև, չենք կարող մեղքով գալ: Տերը պատրաստ սպասում է մեզ, որովհետև Ինքն Իր գործն արդեն կատարել է մեզ համար, ուստի մեզ մնում է միայն խոստովանել մեր մեղքերը, ժամանակ անցկացնել Նրա հետ և Նրա խոսքում մնալ, որպեսզի կարողանանք տեսնել մեր աղտոտ վիճակը և զգալ մաքրվելու կարիքը: Երբ խոստովանենք, Գողգոթայի խաչը մեզ կսրբի ամեն մեղքից, կմաքրի ամեն աղտից: Այսպիսով՝ մեր քայլերը ավելի կմոտենան Բեթելին՝ Տիրոջ տանը:

Երրորդ՝ Հակոբն ասաց իր հետ եղողներին. «Ձեր հանդերձները փոխեք»: Հին Կոստանդնուպոլսի հանդերձը սովորության խորհրդանշան էր: Ի՞նչ սովորություն ուներ Հակոբը. խաբելը, մարդկային միջոցներ գործածելը, մարդկային իմաստությամբ վստահելով՝ իր գործերը կատարելը. սա էր նրա հանդերձը: Մենք էլ մեր հանդերձները՝ սովորությունները, ունենք: Տերն ուզում էր, որ Բեթել չգնացած՝ Հակոբն ու իր ընտանիքը այդ սովորություններից ձեռքազատվեին, հին հագուստները փոխելով՝ նոր պատմություններ հագնեին: Պողոս առաքյալը Եփեսացիներին ուղղված նամակում խոսում է հին մարդու մասին, որ հագել է ստախտություն, խաբեություն և ամեն տեսակի մեղսալից հագուստներ ու ասում է, որ հանի հին մարդուն, հագնի նորը, փոխի հին հագուստը նոր հագուստով՝ սիրո հագուստով: Հին սովորությունները պետք է փոխել նորերով: Հակոբի ընտանիքը, անելով դա, մաքրվեց ու հավատքի քայլեր կատարելով՝ ճանապարհ ընկավ դեպի Բեթել: Տիրոջ խոսքը այսպես է ասում. «Այսուհետև քո անունը Հակոբ չի լինելու, այլ Իսրայել»:

Դեպի Բեթել մեր ճանապարհը փրկության ճանապարհը չէ, այլ Քրիստոսին՝ Տիրոջը, ճանաչելու, աճելու ճանապարհն է: Ինչպես Տերը Հակոբին երևաց Բեթելում ու խոստում տվեց նրան լինել նրա պահապանը ու Աստվածը, նույնպես էլ մենք, երբ խոստովանենք, կփրկվենք, երբ հին մարդուն հանենք ու նոր մարդուն հագնենք, Տերը կլինի մեր ապավենը: Եթե աշխարհով տարված՝ հեռանանք Աստծուց, մեր փրկությունը ապահովված է Քրիստոսով, սակայն խոստովանելուց հետո Նրա հետ ավելի ժամանակ պետք է անցկացնենք, որ ճանաչենք Նրան, Նրա խոստումները վերցնենք ու Նրա գիտությունը ստանանք: Ես ու կինս պսակադրության օրը իրարու «այո» ասացինք, սակայն մեր ամուսնությունից հետո էր, որ իրար սկսեցինք իսկապես ճանաչել: Աստծուն «այո» ենք ասում, սակայն Աստված ուզում է, որ Իրեն ճանաչենք, Բեթել գնանք՝ այն տեղը, որտեղ Իր հետ ժամանակ կարող ենք անցկացնել:

Ինչպես Հակոբը, մենք նույնպես կատարենք նույն քայլերը՝ խոստովանենք, մաքրվենք մեր հին սովորություններից, օտար չաստվածներից մեր կյանքից հանենք և մոտենանք Բեթելին: Տերն այնտեղ է, սպասում է մեզ: Եվ ինչպես Հակոբի անունը փոխեց Իսրայելի, խա-

բեքայի անունից խաղաղության իշխանի, նույնպես քո սիրտը կփոխի: Նա քննեց Հակոբի սիրտը և տեսավ, որ նա ճշմարիտ սրտով էր մոտեցել Իրեն: Տերը քննում է սրտերը:

Երբ Հակոբը Բեթել եկավ, Աստծո ձայնը լսեց: Հակոբն իր Տիրոջը հետևեց ու Նրա ճանապարհով քայլեց: Հին Կտակարանում գրված է, որ երբ Տերը չէր խոսում Իսրայելի ժողովրդի հետ, դա նրանց ամենամեծ պատիժն էր: Երբ Հակոբը մոռացավ Բեթելի մասին, այլևս չլսեց Տիրոջ ձայնը, բայց երբ Բեթել եկավ, իր սիրելի Տիրոջ ձայնը դարձյալ լսեց, և Տերն ասաց. «Ես եմ ամենակալ Աստվածը»: Տարիների ընթացքում Հակոբն Աստծուն վստահելու փոխարեն վստահել էր իր կարողությանը, սակայն երբ քայլ արեց դեպի Աստված, Տերը նրան վստահեցրեց, որ այլևս չհենվի իմաստության վրա, այլ Իրեն հանձնի ամեն բան, որովհետև Ինքն ամենակարող Աստված է:

Վերջին՝ երբ Հակոբը Բեթել եկավ, Տերը 30 տարի առաջ տված խոստումները դարձյալ հիշեցրեց նրան ու քաջալերեց՝ ասելով, որ աճեցնելու է նրա սերունդը ու թագավորներ են դուրս գալու նրա սերունդից: Հակոբի կյանքից հետևյալը կարող ենք տվորել. Տերը պահում է Իր խոստումները, մենք ենք, որ հեռանում ենք Աստծուց: Նա հիշեցնում է մեզ, որ ետ դառնանք Իրեն, ինչպես հիշեցրեց Հակոբին՝ նրան վստահեցնելով, որ կյանքում այլևս չի մտահոգվելու, որովհետև Ինքն ամենակարող Աստված է:

Հակոբի նման մենք պետք է լսենք մեր Տիրոջ խոսքը, հավատքի քայլեր անենք և մեր կյանքը հանձնենք ամենակարող Աստծուն:

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից



*«Հետևաբար հավատով արդարացած լինելով, խաղաղություն ունենք
Աստծո հետ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով. Ում միջոցով նաև
հավատով մուտք ունենք այս շնորհի մեջ, որի մեջ մենք կանգնած ենք
և ուրախանում ենք Աստծո փառքի հույսով»*

Հռոմ. 5:1-2

Լսել զանգակի ազդանշանը

«Մեր տնից ոչ այդքան հեռու մի դաշտ կա, որտեղ երկու ձի է առածում, - ասաց մի խոհեմ մարդ: - Երբ հեռվից նայես, կասես, թե դրանք նման են ցանկացած այլ ձիու: Սակայն երբ մոտիկից նայես, կնկատես, որ այդ ձիերից մեկը կույր է: Նրա տերը նախընտրել է նրան չսատկեցնել, այլ ապահով ապաստան տալ, որ ինքնին հատկանշական է:

Երբ դաշտի մոտակայքում գտնվես և ականջ դնես, կլսես զանգակի ձայնը: Երբ շուրջդ նայես, կտեսնես, որ այն գալիս է դաշտում գտնվող փոքրիկ ձիուց: Նրա պարանոցից կապված է փոքրիկ զանգակ, որն օգնում է նրա կույր ընկերոջը իմանալու, թե որտեղ է և հետևելու նրան:

Երբ կանգնես ու դիտես այս երկու բարեկամներին, կտեսնես, թե որքան ուշադիր է փոքր ձին, որ կույր ընկերը լսի իր զանգի ձայնը ու իր մոտ գա, որ ճիշտ ճանապարհով առաջնորդի նրան: Երբ երեկոյան մարագ են վերադառնում, նա հաճախ հետ է նայում՝ համոզվելու, որ կույր բարեկամը հետևում է իրեն ու ապահով է:

Այս երկու ձիերի տերերին պես, Աստված մեզ չի անտեսել, քանի որ անկատար ենք և որոշ հարցեր ու դժվարություններ ունենք: Նա կհսկում է մեզ և նույնիսկ ուրիշներին է բերում մեր կյանքի մեջ, որ օգնեն մեզ, երբ կարիք ունենանք: Երբեմն մենք նմանվում ենք կույր ձիուն, որ հետևում է այն փոքրիկ զանգակներին, որ Աստված դրել է մեր կյանքում: Երբեմն մենք ենք առաջնորդ ձին, որ օգնում է ուրիշներին, որ տեսնեն:

Լավ բարեկամները այսպիսին են: Նրանց միշտ չես տեսնի, բայց գիտես, որ միշտ ներկա են: Տերը օգնի՝ մեզ, որ միմյանց զանգակները լսենք ու իրար տեր լինենք:

«Երկուսն ավելի լավ է քան մեկը», - ասում է Ժողովողը, - «քանի որ նրանց աշխատանքն ավելի լավ վարձ ունի, քանի որ եթե ընկնեն, մեկը մյուսին կբարձրացնի» (4:9-10):

Փոփոխություններ ACM-ում

«Նույնպես էլ դուք, երբ ձեզ հրամայված բոլոր բաներն անեք, ասացե՛ք. «Մենք անպիտան ծառաներ ենք, արել ենք այն՝ ինչ որ պարտավոր էինք անել»» (Դուկ. 17:10):

Այս համարը ինձ նվիրել է սիրելի եղբայրս 2010 թվականին՝ Հայաստան կատարած իմ առաջին այցի ժամանակ, Երևանում: Այս ճանապարհորդությունը հնարավոր դարձավ Գույուճյան Հրաչ եղբոր սիրալիր հրավերով, ով անմիջական կապ ունի «Ազդարարության փող» թերթի թողարկման հետ: Այս ծառայությունը հիմնադրվել է 54 տարի առաջ նրա հոր՝ Արթուր Գիուճյան եղբոր կողմից և հավատարմորեն շարունակվում է մինչև այսօր:

Առաջին այցելությունից ի վեր ես քաջալերված և օրհնված եմ՝ տեսնելով Հայ քրիստոնեական առաքելության և նրա ծառայակիցների աշխատանքը, ովքեր Ավետարանը հավատարմորեն ներկայացնում են կարիքավորներին ոչ միայն Հայաստանում, այլև Լիբանանում: Այս տարվա հուլիսի 13-22-ը առաջին անգամ պատիվ ունեցա Լիբանան այցելել այնտեղ վերջին երեք տարիներին ACM-ի ծառայությունը առաջնորդող Բաֆֆի Չափարյան եղբոր հետ:

Ես խորապես զգացված եմ անցյալ տարվա հուլիս ամսին Հայ քրիստոնեական առաքելության ատենապետը կարգվելուց: Դուկ. 17:10-ի խորհմաստ խոսքերը կրկնելով՝ ես անպիտան ծառա եմ և անում եմ այն, ինչ որ պարտավոր եմ անել: Հունարեն «պարտական» բառն այնքան տեղին է. այն նշանակում է պարտքը վճարող: Պողոսի խոսքերով՝ մենք ոչինչ ենք, բայց հիշե՛նք Տեր Հիսուսի մխիթարությունը. «Առանց Ինձ դուք ոչինչ չեք կարող անել» (Հովհ. 15:5):

Մենք ուզում ենք քաջալերել ձեզ, որ Տիրոջ գործում բաժին ունենաք, ինչպես նախկինում արել եք թե՛ աղոթքներով և թե՛ գործնական աջակցությամբ:

Տերը մեզ նոր շենք նվիրեց Երևանում, որը կոչվում է Փարոս: Այս տարվա միսիոներական առաքելության մասնակիցներին կարողա-

ցանք շատ հարմարավետ հյուրընկալել այս շենքում և անհամբերությամբ փափագում ենք ավելին անել մեր հաջորդ ուղևորության ժամանակ (օգոստոսի 30 - դեկտեմբերի 16, 2024թ.):

Այս տարածքում նախատեսված են բազմազան միջոցառումներ՝

- Աստվածաշնչի շաբաթական ուսումնասիրություններ և Ավետարանի քարոզչություն մեր խնամքի տակ գտնվող ընտանիքների և այցելուների համար:
- Մարտուն եղբայրը նախատեսում է եղբայրական ժողովներ սկսել:
- Մանկական ծառայություններ և հանդիպումներ ACM-ի մեր աշխատակիցներին խրախուսելու համար:
- Հայաստանի և Լիբանանի շուրջ 150 ընտանիքների աջակցությունը շարունակվում է Տիրոջ շնորհքով: Մենք երախտապարտ ենք բոլոր նրանց, ովքեր այս տարիների ընթացքում անձնվիրաբար ներդրում ունեցան այս ծառայության մեջ: Մենք գնահատում ենք ձեր աղոթքները և հավատքով ու ակնկալությամբ նայում մեր Տիրոջը՝ փնտրելով Նրա երեսը, որպեսզի Նա առաջնորդի մեզ, մինչ այս տարին մոտենում է ավարտին: Թող որ շարունակենք մեր Տիրոջ և Զրիստոսի համար անել այն, ինչ որ պարտավոր ենք անել:

Դոկտոր՝ Դանիել Ջեյմս